

# **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԸ**

### **ԱՐԹՈՒՐ ՎԱՐԱՐՇՅԱՆ**

Նորանկախ պետության շինարարության և կայացման գործընթացում, որպես նախապայման, կարևորվում են ինչպես պետական իշխանության, այնպես էլ ժողովրդի պետական մտածողությունը և կամքը, պետականություն ստեղծելու կարողությունը: Նորանկախ պետության շինարարությունը տարաբնույթ և բազում միջոցների համակարգ է՝ ուղղված պետական կառուցակարգի հիմնադրմանը, կայացմանը և արդյունավետ գործունեությանը: Պետական շինարարության հիմնարար հարցերից մեկն էլ պետական կառավարման ձևն է: Ցանկացած պետության կառավարման ձևը որոշելու հարցում էական նշանակություն ունի կառավարության կազմավորման և հաշվետվության եղանակը:

Առաջին հանրապետության կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի, կառավարության և գործադիր իշխանության այլ մարմինների հարաբերակցության հիմնահարցերը, հետևաբար և պետական կառավարման ձևը հատուկ հետազոտության չեն ենթարկվել: Խնդիրը բարդ է, քանի որ Առաջին հանրապետությունում կառավարության ձևավորման կարգի, կազմի, կառուցվածքի և իրավասության առումով հասարակական հարաբերությունների կարգավորմանը նվիրված ընդհանուր նորմատիվ իրավական ակտ չի ընդունվել: Այդ հարցերի վերաբերյալ իրավական նորմեր չէին ամրագրված նաև Հայաստանի խորհրդի ընդունած խորհրդարանի կանոնակարգում («Նակագում»): Անշուշտ, երկու և կես տարիների ընթացքում ընդունվել են օրենքներ, որոնք վերաբերում էին մեզ հետաքրքրող հիմնահարցերին, սակայն դրանք կարգավորում էին գործադիր իշխանության կազմակերպման ու գործունեության շատ նեղ, մասնակի հարաբերությունները: Փորձենք Առաջին հանրապետության պետական շինարարությանը վերաբերող արխիվային փաստաթղթերի հիման վրա պարզաբանել վերը նշված հիմնախնդիրները:

Առաջին հանրապետությունում գործադիր իշխանության մարմինները և՛ պետական շինարարության, և՛ այլ ոլորտներում օժտված էին առարկայական և գործառնության լայն իրավասությամբ: Համաձայն պետաիրավական դասական դոկտրինայի՝ «կառավարությունը կոչված է ապահովելու գոյություն ունեցող հանրային կարգը, երաշխավորելու մարդու իրավունքները և ազատությունները, պաշտպանելու պետության արտաքին շահերը: Նրա վրա դրված է պետական կառավարման ոլորտում տնտեսական, սոցիալական և այլ գործառնությունների իրականացումը»<sup>1</sup>: Առաջին հանրապետության պետական շինարարության փորձից ակնհայտ է մի

<sup>1</sup> «Конституционное право зарубежных стран». М., 2005, с. 348.

բան. կառավարության իշխանությունը գործադիր-կարգադրիչ և ենթաօրենսդրական բնույթ ունեւո՞ւմ: Նրա իրավասությունն ընդգրկում էր պետական կյանքի բոլոր հարցերը՝ բացի ենթաօրենսդրորեն խորհրդարանի և մյուս պետական մարմինների իրավասությանը վերապահվածների:

Կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի հարաբերակցության հիմնահարցերը մասնակիորեն էին իրավական կարգավորման ենթարկվել: Հանրապետության պետաիրավական շինարարության փորձի ուսումնասիրությունից կարող ենք բացահայտել կառավարության կազմավորման կարգի ընդհանուր գծերը: Վարչապետ՝ «առաջին մինիստր» կամ մինիստր-նախագահ, ընտրում էր խորհրդարանը, այնուհետև նա կազմում էր մինիստրների կաբինետը: «Առաջին մինիստրը ներկայացնում է պառլամենտին մինիստրների կազմը և կառավարության հայտարարությունը (ղեկարացիան) վարվելիք քաղաքականության մասին: Պառլամենտի հավանությունը այդ հայտարարությանը ընդունվում է իբրև վավերացում կաբինետի»<sup>3</sup>, - ասված է արտաքին գործերի մինիստրի կազմած տեղեկագրերից մեկում: Սակայն մանրագնին հետազոտությունը ցույց է տալիս, որ այս կարգը ոչ միշտ է պահպանվել: Բացի այդ՝ կառավարության ձևավորման կարգերը Հայաստանի խորհրդում և պառլամենտում իրենց հայեցակարգային հիմքով լինելով ընդհանուր, այնուամենայնիվ ունեին որոշակի տարբերություններ:

#### **Կառավարության ձևավորման կարգը Հայաստանի խորհրդում:**

Առաջին հանրապետության առաջին կառավարությունը ձևավորվել է Թիֆլիսում՝ Հայոց կենտրոնական խորհրդի կողմից, երբ վարչապետ ընտրվեց Հ. Քաջազնունին: Այս խորհրդի գործունեությանը վերաբերող փաստաթղթեր մեզ համարյա չեն հասել: Միակ աղբյուրը այդ իրադարձությունների մասնակից և ակնմատես Ս. Վրացյանի՝ «Հայաստանի Հանրապետություն» մենագրությունն է: Նա գրում է. «...հենց որ հաշտարար պատվիրակությունը Բաթումից վերադարձավ, Հայոց ազգային խորհուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարության կազմակերպման՝ իրավիճակով վարչապետության Հ. Քաջազնունիին. այստեղ էլ բացվեց անակնկալ դժվարություն. ժողովրդական կուսակցությունը Մ. Պապաջանյանի գլխավորությամբ կտրականապես մերժեց Քաջազնունիի առաջարկը՝ մտնելու նախարարության մեջ...: Ի վերջո, երկար բանակցություններից հետո, Քաջազնունուն հաջողվեց կյանքի կոչել հետևյալ կազմով կառավարություն՝ վարչապետ՝ ինքը՝ Քաջազնունին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյանը, ներքին գործերի՝ Արամ, ելևմտական՝ Խ. Կարճիկյան, զինվորա-

<sup>2</sup> Պետք է նկատի ունենալ, որ կառավարության իրավասության սահմանադրական ամրագրումը բացառիկ երևույթ է սահմանադրական իրավական պրակտիկայում նույնիսկ արդի պայմաններում: «Արտասահմանյան երկրների սահմանադրությունները շատ հազվագյուտ են պարունակում կառավարության իրավասությունն ամրագրող ծավալուն դրույթներ: Ինչքան բարձր է քաղաքականությունը կենսագործելուն և պետության շահերի պաշտպանությունն ապահովելուն կոչված մարմնի կարևորությունը, այնքան լայն են նրա հայեցողական լիազորությունները և հազվադեպ՝ սահմանադրական կարգավորումը: Ինչևէ, նորագույն սահմանադրությունների մեծ մասում նկատվում է կառավարության լիազորությունների ընդլայնման միտում: Դա դրսևորում է այնպիսի բանաձևի օգտագործմամբ, ըստ որի՝ կառավարության և նրա գլխի վրա դրվում են ազգային քաղաքականության մշակումն ու կենսագործումը» («Конституционное право зарубежных стран», էջ 349):

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, ք. 25:

կան՝ Զ. Հախվերդյան: Վերջինը միայն անկուսակցական էր, մյուսները անդամ էին ՀԶ Դաշնակցության»<sup>4</sup>:

Թե որ օրն է ձևավորվել այս կառավարությունը, Ս. Վրացյանը չի նշում: Հայտնի է, որ հուլիսի սկզբին այն արդեն գործում էր և մինչև Երևան մեկնելը կարգավորել էր մի շարք գործադիր խնդիրներ: Ըստ Ս. Վրացյանի՝ «Երևան փոխադրվելու հարցը կտրուկ կերպով դրվեց Ազգային խորհրդի և կառավարության հուլիսի 13-ի միացյալ նիստում... 7 քվեով ընդդեմ 5-ի, որոշվեց Ազգային խորհուրդն ու կառավարությունը փոխադրել Երևան»<sup>5</sup>: Հուլիսի 17-ին Ազգային խորհուրդն ու կառավարությունը մեկնեցին Թիֆլիսից և հուլիսի 19-ին, ուշ երեկոյան հասան Երևան: Այսպիսով, Վրացյանի տվյալներով՝ Թիֆլիսում ձևավորված կառավարությունը կազմված էր չորս նախարարներից՝ գումարած վարչապետը: Ինչպես կտեսնենք քիչ հետո, Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը, որի առաջին նիստը գումարվեց օգոստոսի 1-ին, վարչապետ չի ընտրել: Այս պարադոքսի լուծումը ևս մեզ անհայտ է: Նորից ըստ Վրացյանի՝ «Թիֆլիսի և Երևանի Ազգային խորհուրդների մի շարք խառը նիստերում վերջնական ձև ստացան Ազգային խորհուրդն ու կառավարությունը... Կառավարության կազմը պահվեց նույնը, ինչ որ նշանակված էր Թիֆլիսում: Քիչ հետո հրավիրվեց միայն նոր նախարար արդարադատության համար՝ տեղական անկուսակցական գործիչներից մեկը՝ Գ. Պետրոսյանը»<sup>6</sup>:

«ՀՀ Կառավարություն» արխիվային ֆոնդի ցուցակ 1, 10-րդ գործի թիվ 2 թերթում առկա է Հայոց Ազգային խորհրդի մի հայտարարություն այն մասին, որ «կազմված է Հայաստանի Հանրապետության կառավարությունը հետևյալ կազմով. նախարար-նախագահ - Զ. Քաջազնունի, նախարար արտաքին գործերի - Ա. Խատիսյան, նախարար ներքին գործերի - Ա. Մանուկյան, նախարար զինվորական - Յ. Հախվերդյան, նախարար ֆինանսների - Խաչատուր Կարճիկյան, նախարար արդարադատության - բաց<sup>7</sup>: Ալեքսանդր Խատիսյանի բացակայությամբ՝ Արտաքին գործերի նախարարի պաշտոնը վարելու է նախարար-նախագահը: Արդարադատության նախարարությունը ժամանակավորապես կառավարելու է Խ. Կարճիկյանը:

Հայոց Ազգային խորհուրդ

24-ին հուլիսի (նոր տոմար), 1918 թ., Երևան»<sup>8</sup>:

Այսպիսով, Թիֆլիսում և Երևանում ձևավորված կառավարություններն իրենց կառուցվածքով տարբերվում էին: Առաջինը ներառում էր չորս նախարար, իսկ երկրորդը՝ հինգ:

<sup>4</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 185:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 187:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 190:

<sup>7</sup> Վարչապետի՝ մինիստր-նախագահի 1918 թ. հուլիսի 28-ի թիվ 1 կարգադրությամբ արդարադատության նախարարի պարտականությունները ժամանակավորապես կատարող ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանը ազատ է համարվում արդարադատության մինիստրի պարտականությունները կատարելուց: Արդարադատության մինիստր է նշանակվում երդվյալ հավատարմատար, այսինքն՝ փաստաբան Գ. Պետրոսյանը (տես «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, թիվ 1, 1 սեպտեմբերի, 1918 թ., «Մինիստր նախագահի կարգադրությունները»):

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ նոր ձևավորված Հայաստանի խորհուրդը 1918 թ. օգոստոսի 1-ի իր առաջին նիստում վարչապետ չի ընտրել: Հայաստանի խորհուրդն իր 2-րդ նիստում օգոստոսի 3-ին միանգամից լսել է կառավարության հայտագիրը («դեկլարացիան»)<sup>9</sup>: Այնուհետև Հայաստանի խորհրդի 3-րդ նիստում օգոստոսի 5-ին քննարկվել է կառավարության հայտագիրը՝ խորհրդարանի ֆրակցիաները «կարդում են իրենց պատասխանները կառավարության դեկլարացիային»<sup>10</sup>: Օգոստոսի 6-ին (4-րդ նիստ) վարչապետ Յ. Քաջազունին խորհրդարանի ֆրակցիաներին տալիս է բացատրություններ կառավարության դեկլարացիայի մասին ֆրակցիաների արտահայտած նկատառումների կապակցությամբ<sup>11</sup>: Քննարկումների արդյունքում առաջադրվում է երկու բանաձև: Մեկը ՀՀԴ-ի և ՀԺԿ-ի միացյալ բանաձևն էր, իսկ մյուսը՝ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ֆրակցիայի: Առաջին բանաձևը հետևյալն էր. «Հայաստանի խորհրդարանը լսելով կառավարության հայտարարությունը և մինիստր նախագահի բացատրությունները այդ հայտարարության առիթով եղած դիտողությունների մասին, հավանություն է տալիս նրանց և անցնում հերթական խնդիրներին»<sup>12</sup> (23 կողմ, 11 ձեռնպահ, դեմ՝ 0): Փաստորեն, Հայաստանի խորհուրդը 1918 թ. օգոստոսին վարչապետ չի ընտրել: Ամենայն հավանականությամբ իրեն համարելով Թիֆլիսի Հայոց Ազգային կենտրոնական խորհրդի լեգիտիմ իրավահաջորդը՝ խորհուրդը կասկածի տակ չի դրել Յ. Քաջազունու վարչապետությունը և միանգամից լսել է նրա կառավարության դեկլարացիան՝ իրականացվելիք քաղաքականության ծրագիրը:

Հայաստանի խորհուրդը կառավարություն ձևավորել է ևս մեկ անգամ՝ 1918 թ. նոյեմբերին: Դա, այսպես կոչված, կոալիցիոն կառավարությունն էր: Յ. Քաջազունու առաջին կառավարությունը, որ ձևավորվեց 1918 թ. հուլիսին, և որի «հայտարարագիրը» հաստատվեց Հայաստանի խորհրդի օգոստոսի 5-ին կայացած նիստում, միակուսակցական հիմքով կազմված կառավարություն էր: Հայաստանի խորհրդի և կառավարության գործունեության առաջին ամիսների փորձը ցույց տվեց, որ առանց կոալիցիայի շատ դժվար է լինելու պետական իշխանության իրականացումը: Իրադրությունը փոխվել էր, և հիմա արդեն իրենք՝ ժողովրդականները, ավելի շատ էին շահագրգիռ կոալիցիա կազմելու: Ահա թե ինչպես է մեկնաբանում այդ կուսակցության դիրքորոշման փոփոխությունը ՀԺԿ-ի օրգան

<sup>9</sup> Տե՛ս «Ձանգ», թերթ, Եր., 1918 թ., 7 օգոստոսի, թիվ 43(59)՝ «Հայաստանի պետական խորհրդարանի բ նիստը, 1918 թ. օգոստոսի 3»: Հետաքրքիր է այն փաստը, որ այս նիստում Հայաստանի խորհուրդն ընտրել է մի «մասնաժողով մինիստրության կազմակերպման օրինագիծ մշակելու համար»: Ամենայն հավանականությամբ խոսքը կառավարության և նախարարությունների կազմավորման և գործունեության հարաբերությունները կարգավորող օրինագիծ մշակող ժամանակավոր հանձնաժողովի մասին է: Սակայն ոչ այդ հանձնաժողովի աշխատանքի, ոչ էլ նրա գործունեության արդյունքների վերաբերյալ որևէ վկայություն մեզ չի հասել: Առաջին հանրապետության երկու խորհրդարաններից ոչ մեկը այդպիսի օրենք չի ընդունել:

<sup>10</sup> «Ժողովուրդ», թերթ, Եր., 1918, թիվ 1, օգոստոս:

<sup>11</sup> Տե՛ս «Ձանգ», թերթ, 1918, 1 օգոստոս, թիվ 43(59):

<sup>12</sup> Սոցիալ-դեմոկրատական կուսակցության ֆրակցիայի բանաձևը հավաքում է 6 կողմ, 21 ձեռնպահ և 0 դեմ: Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության և մուսուլմանական ֆրակցիաները բանաձևեր չեն առաջարկել (տե՛ս «Ձանգ», թերթ, 1918 թ., 14 օգոստոսի, թիվ 45(61))՝ «Հայաստանի խորհրդի 4-րդ՝ օգոստոսի 6-ի նիստը»:

«ժողովուրդ» թերթը. «Երբ 3 ամիս առաջ Հայոց Ազգային ժողովը հանձնարարեց հայ կուսակցությունների ներկայացուցիչներին կազմել ՀՀ կառավարություն, Հայ ժողովրդական կուսակցությունը մանրամասն կշահադատելով մեր ժողովրդի դրությունը և նրա միջազգային կացությունը՝ դրեց որոշ պայմաններ, առանց որոնց նա իր մասնակցությունը հայկական կառավարության մեջ համարում էր աննպատակահարմար: Այդ պայմանները չընդունվեցին Դաշնակցության կողմից և հայկական 1-ին կառավարությունը կազմվեց առանց ժողովրդական կուսակցության մասնակցության: Եվ եթե մենք համոզված էինք, որ նախկին կառավարությունը մենակ անկարող կլիներ մեր երկրի դրությունը բարելավել, սակայն, ժողովրդական կուսակցությունը համարելով պատասխանատու օպորտիզիա, իր վստահությունը և աջակցությունը խոստացավ կառավարությանը, եթե այն իրագործեր իր դեկլարացիայի մեջ արված խոստումները:

Սակայն երկու ամսվա փորձը ցույց տվեց, որ նախկին կառավարությունը անկարող էր դուրս բերել մեր հանրապետությունը և ժողովուրդը այն փակուղուց, որի մեջ նրանք գտնվում էին: Միևնույն ժամանակ արտաքին աշխարհում սկսեցին կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են վճռել հայ ժողովրդի բախտը տասնյակ տարիների համար: Ահա այսպիսի պահին ՀԺԿ-ն հանդես եկավ իր առաջարկությամբ՝ կազմել կուլիցիոն կառավարություն: Անելով այս առաջարկը՝ մեր կառավարությունը ղեկավարվում էր ոչ թե նեղ կուսակցական շահերով, այլ նկատի ուներ միայն մեր հանրապետության և ժողովրդի կենսական կարիքները: Այսպիսի մի պատասխանատու պատմական ընտրություն մի կառավարություն չէր կարող վերցնել իր վրա հայ ժողովրդի բախտը ղեկավարելու հսկայական պատասխանատվությունը և Հայ ժողովրդական կուսակցությունը, որի հետ կապված են բազմաթիվ մշակութային, տնտեսական և տեխնիկական ուժեր, իրավունք չունեն հեռու մնալ պետական կյանքից: Նա պետք է լծվեր հայկական պետական նավին, որպեսզի թե՛ կառավարության ղեկի մոտ և թե՛ երկրում հայ ժողովրդի գործոն ուժերը համախմբվեին նրան ծառայելու նպատակի շուրջը: Մյուս կողմից, պառլամենտական կուսակցության փոփոխությունները և գրավոր սահմանադրության բացակայությունը Հայաստանում, իրամայրողաբար պահանջում էին կազմել նոր կառավարություն, գոնե մասնակի կուլիցիոն հիման վրա, հակառակ դեպքում մեր երկրում կարող էին լինել ցնցումներ և աղետներ: Ահա թե ինչու ՀԺԿ-ն արեց ամեն տեսակի զիջումներ, որպեսզի կազմվի այս կառավարությունը և ստեղծվի երկրի կենդանի ուժերի համագործակցություն»<sup>13</sup>:

Հայաստանի խորհրդի 1918 թ. աշնան նիստերի համառոտ, ցաքուցրիվ արձանագրությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ հիմա արդեն ՀԺԿ-ն ինքն էր ավելի շատ ցանկանում ձևավորել կուլիցիոն կառավարություն և խորհրդարանական աշխատանքի բոլոր հնարավորություններն օգտագործում էր այդ նպատակին հասնելու համար: Կուլիցիոն կառավարություն ձևավորելու արտախորհրդարանական գործընթացներն ու խմորումները սկսել էին դեռևս 1918 թ. մայիսին: Սակայն 1918 թ. աշնանը այդ գործընթացները տեղափոխվեցին խորհրդարան: Ենթադրվում էր, որ կուլիսային գործընթացները կհանգեցնեն կառավարության հրաժարականին և նոր

<sup>13</sup> «ժողովուրդ», թերթ, 1918 թ., նոյեմբեր, թիվ 28:

հիմքերով կառավարություն ձևավորելուն: Սակայն կոալիցիոն կառավարությունը ձևավորվեց ոչ այդ ուղիով: 1918 թ. հոկտեմբերի 18-ի խորհրդարանի նիստի օրակարգի հարցերից մեկը խորհրդարանական ժամանակավոր քննիչ հանձնաժողովի զեկուցումն էր Էջմիածնի շրջանի դրության մասին<sup>14</sup>: Հանձնաժողովի զեկուցման մեջ ներկայացվում էր այն անմխիթար վիճակը, որ տիրում էր Էջմիածնում և նրա շրջակայքում: Հանձնաժողովի եզրակացությունն այն էր, որ այստեղ իրավիճակն այդպիսին է դարձել «իշխանության անկազմակերպ, ավելի շուտ իշխանության անպատասխանատու գործունեության հետևանքով»: Հանձնաժողովի զեկուցումը բուռն քննարկում առաջացրեց, որին մասնակցեցին Հայաստանի խորհրդի դաշնակցական, ժողովրդական և սոցիալ-դեմոկրատական ֆրակցիաները: Դաշնակցականները պաշտպանվում էին, իսկ ընդդիմադիրները ամեն ինչում մեղադրում էին կառավարությանը: ՀԺԿ պատգամավոր Եր. Հարությունյանը, ժողովրդական ֆրակցիայի անունից անվստահություն հայտնելով կառավարությանը, առաջարկում է կազմել կոալիցիոն կառավարություն<sup>15</sup>: Կոալիցիոն կառավարություն ստեղծելու առաջարկով հանդես է գալիս նաև սոցիալ-դեմոկրատ Յ. Ազատյանը: Սակայն, նրա կարծիքով, նախապես պետք է «համագործակցության մի պլատֆորմ մշակել և նոր ապա գործի անցնել»<sup>16</sup>: Երկար վիճաբանությունից հետո 17 ձայնով մի կերպ անցնում է դաշնակցականների առաջարկած բանաձևը. «Հայաստանի խորհուրդը Էջմիածնի հանձնաժողովի առաջարկները հանձնում է համապատասխան հանձնաժողովներին ու անցնում է օրակարգի մյուս հարցերին»<sup>17</sup>:

Ինչպես տեսնում ենք, կոալիցիայի հարցը մնաց բաց: Խորհրդի որոշումը վերջնական համարել չի կարելի, քանի որ հարցը տեղափոխվում էր այլ հանձնաժողովներ: Դաշնակցականներին հաջողվեց մի կերպ փրկվել անվստահության քվեից: Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 18-ի նիստի համառոտ արձանագրությունը հրապարակված է դաշնակցական կողմնորոշում ունեցող «Ձանգ» թերթում և «Կառավարության լրաբերում»: «Ձանգ» թերթում տպված լրատվությունը շատ թռուցիկ է, առանց մանրամասնությունների: Այնտեղ ուղղակի նշված է. «Այնուհետև մի շարք պատգամավորներ՝ ... շարունակում են վիճաբանությունը երկար ժամանակ: Նախագահը հարցը դնում է քվեարկության և խորհուրդն ընդունում է կոալիցիոն կառավարություն կազմելու առաջարկը»: Մինչդեռ «Կառավարության լրաբերում» առկա են որոշ մանրամասնություններ, որոնք լույս են սփռում կոալիցիոն կառավարություն ստեղծելու իրավական հիմքերի վրա: Այդ արձանագրությունից մասնավորապես պարզվում է, որ «ընդմիջումից հետո, ձայների խոշոր մեծամասնությամբ անցնում է նաև Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի հետևյալ բանաձևը. «Խորհուրդը անհրաժեշտ է համարում իր մոտավոր գործունեության համար գծել պլատֆորմա, որի շուրջ խորհեն

<sup>14</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918 թ., թիվ 15, «Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 18-ի նիստի արձանագրությունը», ինչպես նաև՝ «Ձանգ», թերթ, 1918 թ., թիվ 64, «Հայաստանի խորհրդի հոկտեմբերի 18-ի նիստի արձանագրությունը»:

<sup>15</sup> Տե՛ս «Ձանգ», թերթ, 1918 թ., թիվ 64:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918 թ., թիվ 15, «Հայաստանի խորհրդի հոկտեմբերի 18-ի նիստի արձանագրությունը»:

բոլոր պառլամենտական դեմոկրատ ֆրակցիաները, կազմելով կոալիցիոն նախարարություն. խորհուրդը առաջարկում է ավագների խորհրդին ամենակարճ ժամանակամիջոցում զծել պլատֆորման ու բերել պառլամենտ»<sup>18</sup>: Արտառոց էր այն փաստը, որ խորհրդարանը պարտադրում էր քաղաքական ուժերին կոալիցիոն կառավարություն ստեղծելու: Քաղաքական գործընթացների զարգացումը հանգեցրեց այն բանին, որ 1918 թ. հոկտեմբերի 31-ին կայացած ՀՀԴ և ՀԺԿ ներկայացուցիչների խորհրդակցությունը կնքեց կառավարություն կազմելու վերաբերյալ հետևյալ արձանագրությունը. «1) Կառավարության կազմը բաղկացած է 9 նախարարությունից, այն է՝ 1. վարչապետ (պրիմեր), որը կարող է լինել առանց պորտֆելի, 2. ՆԳ-ի մինիստրություն, որի մեջ մտնում է պետական գույքերի և երկրագործության վարչությունը, բուժ-սանիտարական բաժինը, հաղորդակցությունը, փոստը և հեռագիրը, 3. ԱԳ մինիստրություն, 4. Զինվորական, 5. Ֆինանսների, որի մեջ մտնում է առևտրի և արդյունաբերության բաժանմունքը, 6. Արդարադատության մինիստրությունը, 7. Ժողովրդական լուսավորության, 8. Պարենավորման և խնամատարության:

2) Այդ նախարարությունները բաժանվում են հետևյալ կերպով՝ Դաշնակցությանը հատկացվում է՝ 1. պրիմերի պաշտոնը, 2. Արտաքին գործերի մինիստրությունը, 3. ՆԳ մինիստրությունը, 4. Զինվորական մինիստրությունը:

3. Ժողովրդական կուսակցությունը ստանում է՝ 1. ֆինանսների, 2. արդարադատության, 3. պարենավորման և խնամատարության, 4. Ժողովրդական լուսավորության մինիստրությունները:

3) Նախարարները ընտրվում են 2 կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Սրա հիման վրա պրիմերը կազմում է կաբինետ: Այսօր 2 կողմերի փոխադարձ համաձայնությամբ պրիմեր է ընտրվում Հ. Յ. Քաջազնունին:

4) Արտաքին գործերի մինիստրը պիտի ունենա օգնական Հ. Ժողովրդական կուսակցությունից»<sup>19</sup>:

Այսպիսով, կոալիցիան կազմակերպվեց առանց ծրագրային հենքի (պլատֆորմի), իսկ բուն կոալիցիայի մեջ մտան միայն երկու կուսակցություն՝ ՀՀԴ-ն և ՀԺԿ-ն: Հայաստանի խորհրդի նոյեմբերի 4-ի 31-րդ նիստում նախագահողը կարդում է վարչապետ Հ. Քաջազնունուց ստացած գրավոր հրաժարականը. «Ի նկատի ունենալով այն, որ Հայաստանի խորհրդի մեծամասնության ու կառավարության միջև ստեղծվել են այնպիսի հարաբերություններ, որոնք թույլ չեն տալիս կառավարությանը արդյունավետ աշխատանք կատարել, ուստի և կարիք են համարում ներկայացնել խորհրդին կառավարության հրաժարականը»<sup>20</sup>:

<sup>18</sup> «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918 թ., թիվ 15, «Հայաստանի խորհրդի հոկտեմբերի 18-ի նիստի արձանագրությունը»: Այս բանաձևին կողմ քվեարկած պատգամավորների թիվ չի արձանագրված: Ինչպես տեսանք, արձանագրության մեջ անրագրված է «ձայների խոշոր մեծամասնությամբ» ձևակերպումը: Ամենայն հավանականությամբ, բոլոր ֆրակցիաները քվեարկել են հօգուտ այդ բանաձևի՝ բացառությամբ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անդամ՝ իրականում մեծամասնական Ար. Մելիքյանի, որը դեմ է արտահայտվում այս բանաձևին ու հայտնում, որ կոալիցիոն նախարարությունը «մեզ ոչինչ չի տա»:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 1:

<sup>20</sup> «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918 թ., թիվ 18:

Ըստ խորհրդարանի համառոտ արձանագրության՝ նոր կառավարությունը կազմելու ձևի մասին տեղի են ունենում երկարատև և թեժ վիճաբանություններ<sup>21</sup>: Ընդդիմությանը (սոցիալ-դեմոկրատներին և սոցիալիստ-հեղափոխականներին) հաջողվում է դաշնակցականների առաջարկած բանաձևը տրոհել երկու մասի՝ ա) կառավարության հրաժարականն ընդունելու հարց, բ) նոր վարչապետի ընտրության հարց: Առաջինն անցնում է 34 ձայնով, 6 ձեռնպահ: Երկրորդը, այն է՝ Զ. Քաջազունուն վարչապետ ընտրելը, անցնում է 25 կողմ, 14 դեմ և 1 ձեռնպահ ձայներով: Այսպիսով, չնայած սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիաների դեմ լինելուն, վարչապետ է ընտրվում Զ. Քաջազունին<sup>22</sup>: Նույն նիստում մինիստր-նախագահ Քաջազունին հայտարարում է նոր կառավարության կազմը<sup>23</sup>: Ստացվում է, որ Հայաստանի խորհրդում կառավարության կազմը միայն հայտարարվում էր ի գիտություն:

Այսպիսով, ընդհանրացնելով Հայաստանի խորհրդի կողմից կառավարության ձևավորման ընթացակարգերը, կարող ենք հանգել հետևյալ եզրակացության. Առաջին հանրապետությունում կառավարության ձևավորման կարգը իրավական հստակ կարգավորում չուներ: Առաջին օրենսդիր մարմնի գործունեության շրջանում խորհրդարանը նախ ընտրում էր վարչապետին, որի թեկնածությունը առաջադրում էին խորհրդարանական ֆրակցիաները. բնականաբար ամենամեծ ֆրակցիան էր որոշում այդ հարցը: Ընտրելով վարչապետին՝ խորհրդարանը նրան հանձնարարում էր կազմել կառավարություն: Խորհրդարանի արձանագրությունների ուսումնասիրությունից երևում է, որ վարչապետն ինքն էր որոշում կառավարության կառուցվածքը, այսինքն՝ նախարարությունների քանակը: Դրան համապատասխան, նա «կառավարության կազմը», որպես ի գիտություն, ներկայացնում էր Հայաստանի խորհրդին: Խորհուրդը կառավարության կազմի վերաբերյալ որոշում չէր ընդունում: Սակայն կառավարության խորհրդարանական հաստատում (ինվեստիտուրա), այնուամենայնիվ, կատարվում էր: Դա կառավարության հայտարարագրի («դեկլարացիայի»)՝ իրացվելիք քաղաքականության ծրագրի քննարկումն ու հաստատումն էր Հայաստանի խորհրդում, որից հետո կառավարությունը համար-

<sup>21</sup> Դաշնակցական ֆրակցիան առաջարկում է ընդունել կառավարության հրաժարականը ու հանձնարարել Քաջազունուն կազմել նոր կաբինետ: Իսկ սոցիալ-դեմոկրատ և սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիաները և Ս. Մամիկոնյանը, նկատելով, որ «նախկին կառավարության ամբողջ քաղաքականությունը վարկաբեկված է, գտնում են անթույլատրելի նախկին մինիստր-նախագահին հանձնարարել նոր կաբինետի կազմումը և առաջարկում են նախագահին ավագների խորհրդի հետ գտնել մի նոր անձնավորության, որ ընդհանուր կոալիցիայի հիմունքներով կազմի կաբինետ»:

<sup>22</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918 թ., թիվ 18:

<sup>23</sup> Ըստ «Կառավարության լրաբերի» 1918 թ. նոյեմբերի 12-ի թիվ 18-ում առկա վարչապետի շրջաբերականի՝ ՀՀ կառավարությունը ուներ այսպիսի կազմ՝ մինիստր-նախագահ (Զ. Քաջազունի), արտաքին գործերի նախարար (Սիրական Տիգրանյան), զինվորական նախարար (Հ. Հախվերդյան), ֆինանսների մինիստր (Ա. Էնֆիաջյան), արդարադատության մինիստր (Սամսոն Հարությունյան), լուսավորության նախարար (Միքայել Աթաբեկյան), պարենավորման մինիստր (Լևոն Դուլյան), հանրային խնամակալության մինիստր (Խաչատուր Կարճիկյան): Այդպիսով, կառավարության կառուցվածքում առկա էր ութ նախարարություն՝ ի տարբերություն 1918 թ. հուլիսի 24-ին կազմված կառավարության, որն ուներ հինգ նախարարություն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 2): Ավելացել էին լուսավորության, պարենավորման և հանրային խնամատարության նախարարությունները:

վում էր լրիվ կազմավորված և իր պարտականությունները ստանձնած: Սակայն, չունենալով ընդհանուր իրավական կարգավորում, կառավարության ձևավորման կարգը երբեմն ձեռք էր բերում դեպք առ դեպք անհատական կարգավորման բնույթ: Այսպես, 1918 թ. նոյեմբերին ձևավորված կառավարությունը չունեցավ իր գործունեության ծրագիրը: Ըստ էության, այստեղ վարչապետի ընտրությունը միաժամանակ նաև կառավարության խորհրդարանական հաստատում (ինվեստիտուրա) էր: Գիշտ է, Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 18-ին ընդունած որոշումը՝ անհրաժեշտ համարել կազմելու կոալիցիա, պարտադրում էր նաև «նոտավոր գործունեության համար ստեղծել մի պլատֆորմա», սակայն այդ «պլատֆորման» կամ կոալիցիոն հայտարարագիրը («դեկլարացիան») անհասկանալի պատճառներով չստեղծվեց: Սա, իհարկե, հարուցում էր նաև ընդդիմադիր կեցվածք բռնած երկու ուժերի՝ սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների դժգոհությունը:

**Կառավարության ձևավորման կարգը Հայաստանի պառլամենտում:** Երբ 1919 թ. օգոստոսի 1-ին գումարվեց Հայաստանի պառլամենտի 1-ին նիստը, կառավարության ձևավորումը արդեն կատարվել էր տրամաբանական պատշաճ հերթականությամբ: Ձևավորելով խորհրդարանի դեկավար մարմինները՝ պառլամենտը օգոստոսի 5-ին նախ լսում է կառավարության զեկուցումը, որը ներկայացնում է վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը (իրավաբանորեն վարչապետը Հ. Քաջազնունին էր): Վերջացնելով երկամսյա գործունեության վերաբերյալ զեկուցումը՝ վարչապետի պաշտոնակատարը գրավոր ներկայացնում է նաև ամբողջ կառավարության հրաժարականը: Տարբեր առաջարկություններից անցնում է (38 կողմ, 0 ձեռնպահ, 2 դեմ ձայներով) պատգամավոր Ս. Վրացյանի հետևյալ բանաձևը. «Վարչապետի զեկուցումը լսելուց հետո, ընդունելով հրաժարականը, առաջարկում ենք կառավարությունը ժամանակավորապես վարի գործերը մինչև պառլամենտը հնարավորություն կունենա ձեռնարկելու նոր ընտրություն»<sup>24</sup>: Օգոստոսի 7-ին 3-րդ նիստում վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը 40 ձայնով՝ ընդդեմ 8-ի, ընտրվում է վարչապետ (առաջադրված էր ՀՀ ֆրակցիայից: Մյուս ֆրակցիաները վարչապետի թեկնածուներ չէին առաջադրել): Այդ առթիվ արդեն պառլամենտը ընդունում է որոշում՝ «Մինիստր-նախարարի ընտրության մասին»<sup>25</sup>: Որոշումը, որը, ի դեպ, միակն էր, որ հրապարակվել է, ունի հետևյալ բովանդակությունը. «Պառլամենտը օգոստոսի 7-ի նիստում Ալեքսանդր Խատիսյանին ընտրեց Մինիստր-նախագահ և հանձնարարեց նրան կազմել Հանրապետության կառավարությունը»<sup>26</sup>:

Պառլամենտի՝ օգոստոսի 10-ի նիստի օրակարգում դրված էր երկու հարց՝ 1) վարչապետի հայտարարությունը կառավարության նոր կազմի մասին, 2) նոր կառավարության հայտարարագիրը: Նիստը սկսվելուն պես պառլամենտի նախագահը խոսքը տալիս է վարչապետին՝

<sup>24</sup> «Հայաստանի աշխատավոր», թերթ, Եր., 1919 թ., օգոստոս, թիվ 5, «Հայաստանի պառլամենտի պաշտոնական առաջին՝ օգոստոսի 5-ի նիստի արձանագրությունը»:

<sup>25</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919 թ., օգոստոս, թիվ 118, «Հայաստանի պառլամենտի օգոստոսի 7-ի նիստը»:

<sup>26</sup> «Հայաստանի Հանրապետության օրենքների հավաքածու», հրատ. պառլամենտի, 1919 թ., նոյեմբերի 3, Եր., թիվ 1, հոդ. 2, էջ 2:

«կառավարության կազմի մասին իր հայտարարությունը անելու համար»<sup>27</sup>: Օրակարգի հարցի ձևակերպումից երևում է, որ վարչապետը ընդամենը հրապարակելու էր կառավարության նոր կազմը և տալու էր բացատրություններ այդ մասին: Այդպիսին է եղել ընթացակարգը նաև Հայաստանի խորհրդում: Սակայն պառլամենտի օգոստոսի 10-ի նիստի նյութերի մանրագնին հետազոտումը ցույց է տալիս, որ այստեղ կառավարության ձևավորման ընթացակարգը տարբերվում էր նախկինից: Այսպես, արդեն վարչապետ ընտրված Ա. Խատիսյանը նախատեսում էր իր՝ մինիստր-նախագահի կողքին ունենալ ինը նախարար: Սակայն քանի որ նախարարների թեկնածուներից չորսը բացակայում էին Հայաստանից, նա խորհրդարանին առաջարկում է վեց նախարարից կազմված կառավարություն՝ 1) նախարարների նախագահ, միաժամանակ ԱԳ նախարար՝ Ա. Խատիսյան, 2) ՆԳ և արդարադատության՝ Ա. Գյուլխանդանյան, 3) Ելևտակյան ու պարենավորման՝ Ս. Արարատյան, 4) զինվորական՝ գեներալ Արարատյան, 5) խնամատարության, աշխատանքի և պետական գույքերի՝ Ավ. Սահակյան, 6) հանրային կրթության և արվեստի՝ Նիկ. Աղբալյան<sup>28</sup>:

Ավարտելով զեկուցումը՝ վարչապետը հայտարարում է. «Կառավարության կազմը ներկայացնում է պառլամենտի հաստատությանը, եթե նախագահը թույլ կտա, ապագա կառավարության կողմից կներկայացնեն նաև հայտագիրը»: Հետաքրքիր է, որ նախկին վարչապետները կառավարության կազմը հայտնում էին ի գիտություն: Նախագահը վարչապետի առաջարկությունը ղնում է պառլամենտի քննությանը: Վարչապետը կարդում է հայտարարագիրը, իսկ այնուհետև պառլամենտի նախագահը հայտնում է, որ այն ղնում է պառլամենտի քննությանը: Դաշնակցական ֆրակցիան առաջարկում է անցնել «հայտարարագրի» քննությանը և հաստատմանը, սակայն սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիան պնդում է՝ քանի որ «հայտարարագիրը» նախօրոք չի բաժանվել, ուստի դրա քննությունը պետք է հետաձգվի հաջորդ նիստ: Ձիջելով՝ դաշնակցական ֆրակցիան առաջարկում է հաստատել կառավարության կազմը, իսկ «հայտարարագրի» քննությունը թողնել հաջորդ նիստին: Նախագահը քվեարկության է ղնում այս առաջարկը, որն անցնում է 27 կողմ, 1 դեմ ձայնով: Այնուհետև նախագահն առաջարկում է սկսել քննարկումները կառավարության կազմի մասին: Սրա դեմ արդեն հանդես է գալիս պատգամավոր Թորոսյանը՝ հիմնավորելով, որ կառավարության կազմի մասին խոսել և քվեարկել չի կարելի: Այդ մասին միայն ի գիտություն է հայտարարվում: Այդուհանդերձ, վարչապետի ներկայացրած կազմն ու պաշտոնների բաժանումը դրվում է պառլամենտի հավանությանը և բաց քվեարկությամբ 37 ձայնով ընդդեմ երկուսի հաստատվում է:

<sup>27</sup> «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919 թ., թիվ 120, «Հայաստանի պառլամենտի օգոստոսի 10-ի նիստը»:

<sup>28</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919 թ., թիվ 120, «Հայաստանի պառլամենտի օգոստոսի 10-ի նիստի համառոտ արձանագրությունը»: Ըստ նորընտիր վարչապետի՝ «դրանով կառավարությունը գործնականապես չի տուժի, որովհետև նախարարները, որ բաժանված են վեցի, կունենան պահանջած չափով օգնականներ ու վարիչներ: Այդ դրությունը երկար չի տևի, որովհետև երբ պառլամենտը հավանություն կտա ներկայացված կազմին, մնացածները, որոնք գտնվում են Պոլիս կամ Փարիզ, այստեղ կլինեն մեկ ամսից ոչ ուշ, որից հետո վարիչների կամ միացումների գործը կվերջանա և յուրաքանչյուր նախարարություն կունենա իր նախարարը»:

Այսպիսով, ի տարբերություն Հայաստանի խորհրդի, Հայաստանի պառլամենտն իր ձևավորած առաջին կառավարության համար հաստատում է նախ նրա կազմը, իսկ հետո միայն՝ հայտարարագիրը<sup>29</sup>: Ստացվեց, որ Հայաստանի պառլամենտը, սկսելով իր գործունեությունը, ըստ էության անցկացրեց կառավարության ինվենտիտուրայի երկու ընթացակարգ՝ կառավարության կազմի և կառավարության քաղաքականության ծրագրի (դեկլարացիայի) հաստատում: Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ այստեղ մեզ համար անհասկանալի մնաց կառավարության կազմի հաստատման ընթացակարգի ներմուծումը և դրա իմաստը: Վերը քննարկված արձանագրություններից երևում է, որ նախաձեռնողը և շահագրգիռը Հայ հեղափոխական դաշնակցությունն էր: Հետաքրքիր է, որ այդ կարգը հետագայում չպահպանվեց: Այսպես, Հայաստանի պառլամենտի 1920 թ. ապրիլի 3-ի՝ 18-րդ նիստի վերաբերյալ հանդիպում ենք հետևյալ փաստերին. «Նախագահողը հայտնում է, որ միմիսոր նախագահից նախագահությունս ստացած է հետևյալ գրությունը.- «Այսու պատիվ ունեն հայտնելու նախագահությանը ի գիտություն Հայաստանի Հանրապետության կառավարության նոր հրավիրված անդամների ցանկը՝ 1. Արտաքին գործերի նախարար՝ Յ. Օհանջանյան, 2. Ջորական նախարար՝ Ռ. Տեր-Մինասյան, 3. Հաղորդակցության նախարար՝ Ա. Ջամալյան, 4. Գյուղատնտեսության նախարար և Աշխատանքի նախարարության կառավարիչ՝ Ս. Վրացյան»<sup>30</sup>: Հետաքրքիր է այն, որ վարչապետն օգտագործում է «ի գիտություն» ձևակերպումը. խորհրդարանն այդ կապակցությամբ քննարկում չի ծավալում: Ուրեմն այստեղ կա եզրույթների շփոթ՝ կառավարության կառուցվածք, կազմ, կաբինետի անդամների նշանակում և այլն: Ակնհայտ է դառնում, որ կառավարության նախարարությունների շրջանակը որոշել է օրենսդիր մարմինը՝ 1918 թ. հուլիսին, 1918 թ. նոյեմբերին, 1919 թ. օգոստոսին: Իսկ 1920 թ. ապրիլի 3-ին ուղղակի տեղյակ է պահվում պառլամենտին: Ուրեմն վարչապետն օրենսդրի գծած կառուցվածքի շրջանակներում ինքն էր որոշում անհատական կազմը, հանում և նշանակում նախարարներին՝ այդ մասին ընդամենը տեղյակ պահելով խորհրդարանին: Բայց նոր նախարարությունների հիմնադրման իրավունքը բացառապես պատկանում էր օրենսդիրին: Դա ակնհայտ երևում է, հատկապես Հայաստանի պառլամենտի գործունեությունից, երբ կառավարության կառուցվածքը որոշվեց 1919 թ. օգոստոսին, հաստատվեց պառլամենտում (ընդդիմադիրները

<sup>29</sup> Հայտարարագիրը հաստատվեց պառլամենտի օգոստոսի 15-ի նիստում: Ընդ որում, քննարկումից առաջ օրակարգում դրվել էր մեկ հարց և՛ «Վարչապետի հայտարարությունը ընդհանուր քաղաքական իրադրության մասին»: Վարչապետն այստեղ ներկայացնում էր Հայաստանին սպառնացող վտանգները և հայցում խորհրդարանի օժանդակությունը: Չնայած դրան, երբ անցան հայտարարագրի քննությանը, սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիայից հռոնդկարյանը, երկու ժամ տևած ելույթում քննադատելով հայտարարագիրը, անվստահություն հայտնեց կառավարությանը: Դաշնակցական ֆրակցիայի անունից ի վերջո քվեարկության դրվեց հետևյալ բանաձևը՝ «Հավանություն տալով կառավարության հայտագրին և վստահելով նրա գործադրությունը կառավարությանը, Հայաստանի պառլամենտն անցնում է օրակարգի մյուս հարցերին»: Բանաձևն անցնում է 28 կողմ ձայնով (տե՛ս «Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919 թ., օգոստոս, թիվ 24, «Հայաստանի պառլամենտի օգոստոսի 15-ի նիստի համառոտ արձանագրությունը»):

<sup>30</sup> ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 10, թ. 1:

շփոթել էին կառուցվածքը և նախարարների նշանակումը), իսկ հետագայում նախարարությունների վերակառուցումը (վերացում, հիմնադրում) կատարվեց միայն օրենքով: Վարչապետը իրավասու չէր բաժանելու նախարարությունները, ստեղծելու նոր նախարարություն: Սակայն նա կարող էր երկու նախարարությունների կառավարումը հանձնարարել մեկ անձի կամ որևէ մեկը վերապահել իրեն: Հետևաբար, արդեն 1920 թ. ձևավորված կառավարություններում դա հստակ դրվածք էր, որից գործադիրը չէր շեղվում: Այսպես, 1920 թ. ձևավորված «բյուրո կառավարության» կազմավորման գործընթացը հետևյալն էր. 1920 թ. մայիսի 5-ի խորհրդարանի նիստում վարչապետ Ա. Խատիսյանը հայտարարում է «կառավարության հրաժարականի մասին»: Գիշտ է, այս ընթացակարգը արտակարգ էր, իսկ պահպանված արձանագրությունը մանրամասնություններ չի պարունակում<sup>31</sup>: Նիստում նույնիսկ չի քննարկվել կառավարության հայտագիրը: Այս կառավարության ինվեստիտուրան կատարվել է միայն վարչապետի ընտրությամբ: Այդ կառավարությունը չունեի դեկլարացիա: Նա միայն հրապարակեց Հանրապետության քաղաքացիներին ուղղված կոչ, որով իր նշանաբանն էր համարում «Հայաստանի անկախության և ազատության պաշտպանությունն ու ներքին դեմոկրատիկ կարգերի ամրապնդումը»<sup>32</sup>: Արտակարգ լիազորությունները կառավարությունը դիտում էր որպես իր նշանաբանի իրականացման միջոց: Կառավարության կազմը խորհրդարանին ներկայացվեց միայն ի գիտություն:

Հայաստանի պառլամենտը ձևավորել է կառավարություն մեկ անգամ և՛ 1920 թ. աշնանը: Նոյեմբերի 23-ին գումարվեց խորհրդարանի արտակարգ նիստ: Օրակարգում կար միայն մեկ հարց՝ կառավարության հրաժարականը և նոր կառավարության ձևավորումը<sup>33</sup>: Խորհրդարանի նախագահ Հ. Քաջազնունին հրապարակեց Հ. Օհանջանյանի նամակը կառավարության հրաժարականի մասին: Այնուհետև ելույթ ունեցավ վարչապետը, որն

---

<sup>31</sup> Խորհրդարանի մայիսի 5-ի 88-րդ արտակարգ նիստն արձանագրված է հետևյալ կերպ. «Նիստը բացվում է ցերեկվա ժ. 11.30-ին: Նախագահում է Ավ. Սահակյանը: Օրակարգ. 1. վարչապետի հաղորդագրությունը - կառավարության հրաժարականի մասին.

Լ. Թադևոսյանը հայտնում է ՀՀԴ անունից, որ հրաժարականն ընդունվում է, ավելացնելով - վարչապետի թեկնածու ֆրակցիան առաջարկում է պատգ. Համազասպ Օհանջանեանին: Դրվում է քվեի պատգ. Օհանջանեանի թեկնածությունը և 32 կողմ, 5 դեմ, 1 ձեռնպահ ընտրվում է վարչապետ: Նորընտիր վարչապետը, իր շնորհակալությունն հայտնելով պառլամենտին, խնդրում է ժամանակ տալ իրեն կազմելու կաբինետ: Նախագահն նիստն ընդմիջում է 15 րոպեով: Նիստը վերսկսում է ժ. 12-ին:

Վարչապետ Հ. Օհանջանեանը հայտարարում է նոր կաբինետի կազմը. - Վարչապետ և ԱԳՆ ինքը. ՆԳ և Ձին. Ռ. Տեր-Մինասյան. Արդարադատության և ֆինանսների - Աբ. Գիւլխանդյան. Հաղորդակցության - Ջամալյան. Հանր. կրթ. - Գ. Ղազարեան. Խնամատարության - Ս. Արարատյան. Գյուղատնտեսության և պետական գույք. և աշխատանքի - Ս. Վրացյան:

Պատգ. Լ. Թադևոսյանը զեկուցանում է պառլամենտին մեկ ամսով արձակուրդ տալու մասին: Հայտնում է շտապողականությունը - ընդունվում է: Անցն. հող. քվեարկության՝ կողմ 27, դեմ 5, ձեռնպահ 1: Հող. 1՝ կողմ 36, դեմ 1, անցնում է: Հող. 2՝ կողմ 36, դեմ 4, անցնում է: Հող. 3՝ կողմ 36, դեմ 1, ձեռնպահ 1, անցնում է: Համարվում է գ ընթերցումը կատարված:

Նիստը փակվում է ցերեկվա ժամը 12.10-ին» (ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 57):

<sup>32</sup> Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 415-416:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 518:

իր ելույթը եզրափակեց հետևյալ խոսքերով. «Այժմ բացվում է նոր շրջան, քաղաքական ուժերի նոր սիտուացիա, և որպեսզի Հայաստանի խորհրդարանը ազատ լինի իր վերաբերմունքը ցույց տալու, իմ կառավարությունը ներկայացրեց իր հրաժարականը՝ նկատի ունենալով հանրապետության շահերը»: Դաշնակցական և սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիաների մեկական պատգամավորների ելույթներից հետո խորհրդարանն ընդունում է դաշնակցական ֆրակցիայի առաջարկած բանաձևը՝ «խորհրդարանը, լսելով նախարարապետի զեկուցումը կառավարության մասին և պատգամավորների ճառերը, հարգելի է համարում, ընդունում է հրաժարականը և անցնում նոր նախարարապետի ընտրության»: Բանաձևն անցնում է 34 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ ձայներով: Այնուհետև թերթիկներով առաջարկվում են թեկնածուներ նոր նախարարապետի համար: Առաջարկվում է միայն Ս. Վրացյանի թեկնածությունը: Խորհրդարանն անցնում է գաղտնի քվեարկության, և 34 սպիտակ, ոչ մի սև, մեկ ձեռնպահ արդյունքներով վարչապետ է ընտրվում Ս. Վրացյանը: Նորընտիր վարչապետը խնդրեց 24 ժամ կառավարության կազմը ներկայացնելու համար: Նոյեմբերի 24-ի երեկոյան նոր կառավարության անդամների ցանկը ներկայացվեց խորհրդարանի արտակարգ նիստի շարունակությանը: Այս նիստի արձանագրության մեջ մենք հայտնաբերում ենք շատ ճիշտ ձևակերպում: Խորհրդարանի նախագահը, բացելով նիստը, հայտնում է, որ ստացել է «կառավարության կազմի անվանացանկը»<sup>34</sup>: Այսպիսով, խորհրդարանին ի գիտություն ներկայացվում էր միայն կառավարության կազմի անվանացուցակը, ինչպես նաև հետագայում դրանում կատարված փոփոխությունները: Դրանցից անմիջապես հետո նախագահը խոսքը տալիս է վարչապետին, որը կարդում է կոալիցիոն կառավարության հայտարարագիրը: Ելույթ են ունենում մեկական դաշնակցական և սոցիալիստ-հեղափոխական պատգամավորներ, որոնք խոստանում են իրենց ֆրակցիաների աջակցությունն այս կառավարությանը: Առաջարկվում է միայն մեկ բանաձև՝ ՀՀ ֆրակցիայի կողմից, հետևյալ բովանդակությամբ՝ «խորհրդարանը, լսելով նախարարապետի դեկլարացիան, հավանություն է տալիս», որը անցնում է 30 կողմ, 2 ձեռնպահ ձայներով: Այստեղ, ինչպես տեսնում ենք, զործի դրվեց կառավարության ինվեստիտորայի մեկ ընթացակարգ՝ դեկլարացիայի հավանություն:

Այսպիսով, Առաջին հանրապետության կառավարությունը ձևավորելու կարգի ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրակացության. կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի հարաբերակցության հիմնահարցերը ենթարկված էին ծավալով չնչին և մասնակի իրավական կարգավորման, ինչը առաջացնում էր բավականին շատ իրավական բացեր և հանգեցնում պատեհապաշտ անհատական իրավական կարգավորման: Կառավարության ձևավորման եղանակը պայմանավորված

<sup>34</sup> Այդ կառավարության կազմը հետևյալն էր. նախարարապետ և արտաքին գործերի նախարար՝ Ս. Վրացյան, զինվորական նախարար՝ Դ. Կանայան, ֆինանսների՝ Համբարձում Տերտերյան, արդարադատության՝ Արշան Խոնդկարյան, գյուղատնտեսության, պետական գույքերի և աշխատանքի՝ Արշակ Հովհաննիսյան, հանրային կրթության և արվեստի՝ Վահան Մինախոյան: Ներքին, խնամատարության և հաղորդակցության նախարարների պորտֆելների ազատ լինելու պատճառով դրանք բաժանված էին հետևյալ ձևով՝ ներքին գործերի՝ ինքը նախարարապետը, խնամատարությանը՝ ֆինանսների նախարար Հ. Տերտերյանը, հաղորդակցությանը՝ արդարադատության նախարար Արշ. Խոնդկարյանը (տե՛ս Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 521):

էր հանրապետության կառավարման ձևով, այն է՝ խորհրդարանական հանրապետություն լինելով: Կառավարության ձևավորման ուղիներից հանրապետությունը որդեգրել էր խորհրդարանականը: Կառավարությունը ձևավորվում էր հետևյալ կերպ. խորհրդարանը խորհրդարանական ֆրակցիաների առաջարկած թեկնածուին (թեկնածուներից) ընտրում էր վարչապետ, որը կազմում էր կառավարության անվանական կազմը և ներկայացնում խորհրդարանին՝ ի գիտություն: Այնուհետև, վարչապետն իր կառավարության անունից խորհրդարանի հավանությանն էր ներկայացնում նաև ապագա կառավարության գործունեության ծրագիրը՝ վստահության քվե ստանալու համար: Ծրագրի հաստատումը խորհրդարանի կողմից նշանակում էր կառավարության վերջնական հաստատում՝ ինվեստիտուրա: Բացի այդ՝ կառավարության գլուխը՝ նորընտիր վարչապետը, կառավարության անվանական կազմը հաստատում էր իր հրամանով:

**АРТУР ВАГАРШЯН – Порядок формирования правительства и форма государственного правления первой Республики Армения.** – На основе изучения архивных материалов автор статьи приходит к выводу, что в первой Республике Армения государственное строительство исходило из принципа разделения властей. Правительство (совет министров), являясь коллегиальным органом общей компетенции, осуществляло исполнительные функции. В его состав входили премьер-министр как глава государства и правительства и министры с портфелями. Формировалось оно следующим образом. Законодательный орган (парламент) избирал премьера. Последний, получив мандат, назначал министров и представлял на утверждение парламента декларацию (программу деятельности правительства). Правительство было ответственно перед парламентом. Таким образом, порядок формирования правительства и его взаимоотношения с законодательным органом позволяют констатировать, что в первой РА формой государственного правления была парламентская республика. Законодательный орган, которому было подотчетно правительство, могло выразить ему вотум недоверия.

**ARTOUR VAGHARSHYAN – The formation of the Government and the form of the state governance of the First Republic of Armenia.** – In the First Republic of Armenia, the state apparatus structure was based on the principle of power separation. The Government, being a collegial body with general competence, performed executive power in the system of the state power. The Government constituted the Prime Minister, as the head of the Government, and the ministers with their portfolios. The Government comprising the Council of Ministers was formed by the legislative body through the election of the Prime Minister. Upon receiving the mandate, the Prime Minister, the head of the Government formed the body of the Government and presented the declaration (the program on the Government's activity) to the Parliament for confirmation. The principle of responsible government was functioning in the Republic. Thus, generalizing the procedure of the Government formation, its relation with the legislative body, one can state that the form of the state governance in the First Republic of Armenia was parliamentary-republican. The Government was accountable to the legislative body, which had the right to express its censure vote to the Government.